Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

X դասարան

(տևողությունը՝ 120 րոպե)

Սիրելի՛ մասնակից

Գարնանային բազմաթույր ծաղիկները թող հաղթանակի դափնի դառնան և զարդարեն քո անցնելիք ճանապարհը :Հաջողությո՛ւն:

1.Ո՞ր հեղինակներն են փառաբանել Մեսրոպ Մաշտոցի անըստգյուտ գյուտը: Գրի՛ր որևէ հեղինակի(կամ հեղինակների) 1-2 քառատող: Գրի՛ր շրջասույթներ Մաշտոցի մասին(առնվազն 3 շրջասույթ): 4մ.

2. Ի՞նչ պատվանուն ունի V դարի պատմիչ Եղիշեն: Ո՞մ պատվերով և ի՞նչ մատյան է գրել Եղիշեն: Ո՞ր պատմավեպի համար է սկզբնաղբյուր ծառայել այդ մատյանը: Գրի՛ր Եղիշեի դասերից(թևավոր խոսքերից) երկուսը:

3. Ովքե՞ ր են առաջին ամգամ հիշատակել մեր էպոսը: Ովքե՞ր են առաջին անգամ գրի առել, ի՞նչ վերնագրերով և ո՞ր թվականներին : Ովքե՞ր են մշակել էպոսը: Ո՞ւմ մշակումն է ամենաարժեքավորը: 4մ.

4.Ի՞նչ նորություն է բերել է Ֆրիկը հայ գրականություն: Արդիակա՞ն է արդյոք «Գանգատ» բանաստեղծությունն այսօր: Գրի՛ր 2 քառատող այդ բանաստեղծությունից: 4մ.

5..Ի՞նչ բանաստեղծություն է գրել Հովհաննես Թումանյանը Սայաթ- Նովայի մասին. ե՞րբ և ի՞նչ առիթով է գրվել այդ բանաստեղծությունը: Ի՞նչ ինքնագնահատականի է արժանացնում աշուղ- բանաստեղծն ինքն իրեն և ի՞ նչ պատգամ է թողնում սերունդներին: Ո՞վ է «Սայաթ -Նովա» մենագրության հեղինակը: Գրի՛ր շրջասույթներ Սայաթ- Նովայի մասին: 4մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան